«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

*Հետազոտության թեման՝ Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը անգլերենի դասավանդման գործընթացում*

*Առարկան՝ Անգլերեն լեզու*

*Հետազոտող ուսուցիչ՝ Կարինե Բաղդասարյան*

*Ուսումնական հաստատություն՝ Ռ. Աբաջյանի անվան N147 հիմնական դպրոց*

*Երևան 2022*

Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը անգլերենի դասվանդման գործընթացում

Բովանդակություն

Ներածություն ……3

Գլուխ 1. Ինտեգրված ուսուցումը որպես կրթության որակի բարձրացման գործոն……5

Գլուխ 2.Մեդիագրագիտության ինտեգրումը անգլերենի դասավանդման մեջ……9

Եզրակացություն ……14

Օգտագործված գրականության ցանկ ……16

## Ներածություն

**Թեմայի արդիականությունը:**

Ինտեգրված դասը հատուկ կազմակերպված դաս է, որի նպատակը կարող է հասանելի լինել միայն տարբեր առարկաների գիտելիքների միավորումից՝ ուղղված դեպի ինչ-որ խնդրի դիտարկմանը և լուծմանը:

Ինտեգրված դասերը աշակերտին տալիս են աշխարհի, առարկաների և երևույթների փոխկապակցվածության մասին բավականին լայն և վառ պատկերացում:

Հիմնական շեշտը այստեղ դրվում է ոչ այնքան որոշակի գիտելիքների ընկալման, որքան ստեղծագործական մտածողության զարգացման վրա:

Ինտեգրված դասերը թույլ են տալիս օգտագործել բոլոր ուսումնական առարկաների բովանդակությունը, ուշադրություն դարձնել գիտության տարբեր ճյուղերին, ենթադրում են սովորողների ստեղծագործական ակտիվության պարտադիր զարգացում:

Դրանք ունեն մի շարք առավելություններ.

- ինտեգրված դասերը նպաստում են ուսուցման մոտիվացիայի բարձրացմանը, սովորողների ճանաչողական հետաքրքրության, ամբողջական գիտական աշխարհի պատկերացումների և երևույթների տարբերկողմերից դիտելու ունակության ձևավորմանը,
- նպաստում են խոսքի զարգացմանը, սովորողների մոտ ձևավորվում են համեմատելու, ընդհանրացնելու, հետևություններ կատարելու հմտություններ, ուսումնադաստիարակչական գործընթացի ակտիվացումը թեթևացնում են սովորողների ծանրաբեռնվածությունը,
- նպաստում են անհատի բազմակողմանի զարգացվածությանը,ներդաշնակ և մտավոր զարգացմանը,
- ինտեգրումը հնարավորություն է տալիս փաստերի միջև գտնելուայնպիսի նոր կապեր, որոնք միավորում կամ խորացնում են սովորողներիդիտարկմամբ արված որոշակի հետևությունները տարբեր առարկաներում:

**Թեմայի նպատակը և խնդիրները:**

Թեմայի նպատակն է ուսումնասիրել՝ ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը անգլերենի դասավանդման գործընթացում:

Խնդիրներն են՝

- ուսումնասիրել՝ ինտեգրված ուսուցումը որպես կրթության որակի բարձրացման գործոն,
- ուսումնասիրել՝ մեդիագրագիտության ինտեգրումը անգլերենի դասավանդման մեջ:

**Հետազոտական աշխատանքի կառուցվածքը:**

Հետազոտական աշխատանքը կազմված է՝ ներածական մասից, երկու բաժիններից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

## Գլուխ 1. Ինտեգրված ուսուցումը որպես կրթության որակի բարձրացման գործոն

Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը:

Դիտարկելով «կրթության որակ» հասկացությունը՝ պետք է նշենք, որ այն բազմաշերտ է և ըստ այդմ՝ կարիք ունի մեկնաբանման՝ կախված նրանից, թե հատկապես որ հարցերն են շեշտադրվում.

- կրթության բովանդակությունը,
- ռազմավարությունը և մարտավարությունը,
- կառուցվածքային և գործառնական բաղադրատարրերը,
- կրթական գործընթացի կազմակերպման վրա ազդող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները,
- կրթություն իրականացնող սոցիալ-հոգեբանական և մանկավարժական միջավայրի առանձնահատկությունները,
- կրթություն ստացողների և այն իրականացնողների հոգեբանական կերպարը,
- կրթություն ստացողների ուսման դրդապատճառների ձևավորվածությունը և այլն:

Անդրադառնալով ուսուցման դրդապատճառներին՝ նկատենք, որ դրանց ձևավորմանը կարելի է հասնել ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպման միջոցով: Մեջբերելով Մ.Վ. Ստեպանովի նկատառումը, ըստ որի՝ կրթական գործընթացը պետք է կառուցել այնպես, որ նպաստի երեխաների մտածողության զարգացմանը, անհրաժեշտ գիտելիքների որոնմանն ու կիրառմանը[1], հավելենք, որ այն ուղղորդելու է սովորողներին՝ օգտագործելու սեփական ստեղծագործական հնարավորությունները և ձևավորելու հետազոտական կարողությունները:

[1]Տե՛ս, Степанова М.В., Организация учебно-исследовательскойдеятельности старшеклассников в профильной школе. СПб.: 2005, էջ 15-16:

Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է ներկայացնել ուսուցման գործընթացի կազմակերպման ձևերից մեկը, որն իրականացվում է ինտեգրված ուսուցման օգնությամբ: Կարևորելով ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպման նշանակությունը՝ կներկայացնենք ինտեգրված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման փորձը:

Ինտեգրված ուսուցման վերաբերյալ դեռ իրենց ժամանակին գաղափարներ են արտահայտել մի շարք մանկավարժագետներ՝ Յ.Ա. Կոմենսկին, Յ.Հ. Պեստալոցցին, Վ. Սուխոմլինսկին, Ի.Պ. Պոդլասին:

Ժամանակակից մանկավարժության մեջ ինտեգրված ուսուցումը ներկայացվում է նոր դիտարկումներով:

Այն իր բնույթով զարգացնող է, բովանդակությամբ՝ բազմաբաղադրատարր, որը ներառում է թե՛ զարգացման սահմանափակ հնարավորություններ ունեցող սովորողներին, թե՛ միջառարկայական կապերի կիրառումը, թե՛ բազմահամակազմային դասարաններում իրականացվող գործընթացները:

Ինչպես նշում է Ե.Ա. Եկժանովան, «Ինտեգրված ուսուցումը, հիմնվելով հատուկ և ընդհանուր կրթության սկզբունքների վրա, պետք է ունենա զարգացնող, դաստիարակող բնութագիր, որը ենթադրում է սովորողների բարոյական գաղափարների, վարքի համարժեք ձևերի մշակում՝ բոլոր մասնակիցների ներառմամբ կրթական գործընթացում»[2]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ըստ. Վ.Վ. Կրաևսկու, դպրոցականների առաջադիմության անկումը գլոբալ խնդիր է, որի լուծման համար անհրաժեշտ է գիտական մոտեցում, ընդ որում՝ ոչ միայն մանկավարժական[3], պետք նշենք, որ ավելի է կարևորվում ինտեգրված ուսուցման կիրառումը՝ որպես կրթության որակի բարձրացման գործոն: Համաձայնելով նաև Վ.Վ. Կրաևսկու այն տեսակետին, ըստ որի՝ այս խնդրի լուծումը բազմաշերտ է և պահանջում է տարբեր մասնագետների՝ մանկավարժների, սոցիոլոգների, հոգեբանների միջամտությունը, անդրադառնանք զարգացնող ուսուցման նշանակությանը ուսուցման արդյունավետության բարձրացման գործընթացում:

Զարգացնող ուսուցման մանկավարժությունը պահանջում է ուսումնական տարբեր առարկաների՝ միմյանց մեջ ներթափանցման ուղիների մշակում, որոնցով պայմաններ

---

[2]Տե՛ս, Екжанова Е.А., Резникова Е.В., Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов. Москва 2008, էջ 52-53:

[3]Տե՛ս, Краевский В.В., Основы педагогики, Учеб. Пособие для студ. Высш. Пед. Учб. Заведений. 2-е изд., испр. М.: Изд. «Академия» 2005,էջ 93-94:

կստեղծվեն դասավանդման ընթացքում աշակերտների կողմից բազմաբաղադրիչ գիտելիքների ձեռքբերման համար:

Հավելենք նաև, որ ինտեգրված ուսուցմամբ դասապրոցեսի իրականացումը բնութագրվում է մի շարք օրինաչափություններով, որոնցից մասնավորապես առանձնացնենք հետևյալները՝

- դասապրոցեսի ընթացքը ըստ մանկավարժի հեղինակային մտածողությամբ իրականացված սցենարի,
- դասապրոցեսի բոլոր փուլերի և բաղադրիչների տրամաբանական կապվածությունը և նրա ծավալումը առանցքային թեմայի շուրջ,
- դասի համար ընտրված դիդակտիկ նյութի շղթայում դասագրքային և լրացուցիչ գրականության հասկացությունների ու գաղափարների համադրումը,
- դասապրոցեսի անցկացումը ինչպես մեկ, այնպես էլ ավելի ուսուցիչների մասնակցությամբ, որոնք կարող են հանդես գալ որպես խորհրդատու - մանկավարժներ:

Կրթության կարևորությունը գնահատելով՝ պետք է ընդունենք, որ կրթության միջոցով կարելի է հասնել հասարակական մտածողության, հոգևոր-բարոյական և մշակութային արժեքների զարգացման: Ինտեգրված ուսուցումը, ապահովելով տարբեր առարկաների գիտելիքների համակցումը, նպաստելու է հետազոտական հմտությունների, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և դրանց հիմքի վրա նրանց կայուն զարգացման իրականացանը:

Ըստ Ն.Ն. Մարֆինինի՝ կայուն զարգացումը կյանքի կազմակերպման այն ոճն է, երբ հիմնախնդիրների լուծումից անցում է արվում դեպի հակամարտությունների կանխատեսում, գործողությունների պլանավորում՝ ուղղված դրանց հաղթահարմանը կամ թուլացմանը[4]:

Սա դառնալու է կրթության որակի բարձրացման և նոր հասարակության ձևավորման հիմնական գրավական:

[4]Տե՛ս, Марфенин Н.Н., Чему и как учить для устойчивого развития? // Экология и жизнь 2011. № 8(117), էջ 13-14:

## Գլուխ 2. Մեդիագրագիտության ինտեգրումը անգլերենի դասավանդման մեջ

Ժամանակակից կրթական պահանջները ենթադրում են,որ օտար լեզուների դասավանդումը չպետք է սահմանափակվի լեզվաբանական այնպիսի հմտությունների ինքնանպատակ դասավանդմամբ, ինչպիսիք են՝

- հնչյունաբանությունն ու ձևաբանությունը,
- բառապաշարն ու շարահյուսությունը:

Օտար լեզուների դասավանդումը պետք է նպատակաուղղված լինի նաև Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հետևյալ կարողունակու - թյան ձևավորմանը՝

- տեղեկատվական հոսքի մեջ կողմնորոշվելու հմտությունն մեդիագրագիտություն,
- վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն:

Ժամանակակից կրթության խնդիրներից է քննական մտածողության, հետազոտականության և հիմնավորված դատողունակության զարգացումը, ինչին նպաստում է մեդիագրագիտության ուսուցանումը:

Շատերը կարծում են, որ աշակերտները վարժ տիրապետում են սոցիալական մեդիային, հետևաբար շատ լավ են հասկանում այն ամենը, ինչ այնտեղ գտնում են: Սակայն ուսումնասիրությունը հակառակն է փաստում:

Այս եզրահանգման են եկել Սթենֆորդի համալսարանի Կրթության ֆակուլտետի հետազոտական թիմի անդամները՝ Սամ Վայնբուրգի գլխավորությամբ:

21-րդ դարը ինֆորմացիոն դարաշրջան է և դժվար է կողմնորոշվել տեղեկատվական հոսքում:

Մարդը շրջապատված է մեդիայով՝

- պաստառներ,
- էկրաններ,
- հաղորդագրություններ,
- հայտարարություններ,
- ազդագրեր,
- լուրեր,

- խաղեր և այլն[5]:

Մեդիան սակայն սոսկ տեղեկությունների շրջանառման միջավայր չէ. այն ձևավորում է հասարակական կարծիք, ազդում է մարդկանց, հատկապես՝ երեխաների ու պատանիների վարքագծի, որոշումների, աշխարհայացքի և նախասիրությունների վրա: Մեդիա սպառողը պետք է զինված լինի համապատասխան գիտելիքով՝ տեղեկատվական դաշտում ճիշտ կողմնորոշվելու համար:

Մեդիագրագիտությունը 21-րդ դարի հրամայականն է, գրագետ մեդիասպառող ձևավորելը՝ ժամանակակից կրթության պահանջը:

Մեդիագրագիտությունը ժամանակակից մարդու համար կենսական հմտություն է, ուստի կրթության ցանկալի վերջնարդյունքներից մեկն էլ պիտի լինիգրագետ մեդիասպառող ձևավորելը:

Քանի որ մեդիագրագիտության նպատակն է մեդիա սպառողին օգնել հասկանալ լրատվամիջոցների աշխատանքը, շարժառիթները և ուղղվածությունը, քարոզչությունը և տարբերել օբյեկտիվ տեղեկատվությունից, խուսափել մեդիայի բացասական ազդեցությունից, ուստի մեդիագրագիտության ուսուցանումը բացի վերոնշյալ նպատակների իրագործումից նպաստում է նաև սովորողների քննադատական և վերլուծական մտածողության զարգացմանը:

Մեդիագրագիտությունը պետք չէ շփոթել լրագրողական հմտությունների դասավանդման հետ:

Իհարկե, գրագետ մեդիասպառող լինելու համար պետք է իմանալ, թե ինչպեսէ պատրաստվում լրատվությունը, կարելի է դասավանդման ընթացքում որոշ հմտություններ փոխանցել, որպեսզի աշակերտները գործնականում պատկերացնեն լրատվամիջոցների աշխատանքը: Բայց մեդիագրագիտության դասավանդման նպատակը ոչ թե մեդիա արտադրող, այլ՝ սպառող պատրաստելն է:

Ժամանակակից դասը պահանջում է ՏՀՏ միջոցների կիրառում, մյուս կողմից մեդիայի սպառումը առօրյայի անբաժան մասն է կազմում: Ուստի ժամանակակից ուսուցչի համար ցանկալի, նույնիսկ հրամայական է մեդիագրագիտության ինտեգրումը դասապրոցեսում: Սակայն մեդիագրագիտությունը չպետք է սահմանափակվի միայն մեդիայի միջոցով

[5]Տե՛ս, Մեդիագրագիտություն, ձեռնարկուսուցիչներիհամար, Երևան, Ինտերնյուս 2013, էջ 74-75:

դասավանդման միտումներով, այլ նաև այն պիտի ներառի մեդիա ստեղծելու և վերլուծելու հմտությունների դասավանդում:

Այդպիսի հմտությունների ինտեգրված դասավանդումը նպաստում է սովորողների ձևավորմանը՝ որպես գրագետ մեդիասպառողներ:

Մեդիագրագիտության դասավանդումը չունի հստակ բանաձևեր: Այն մեծապես կախված է դասավանդող ուսուցչի և դպրոցի մոտեցումից:

Մեդիագրագիտության դասավանդման նպատակներն են՝

- սովորեցնել գնահատել և վերլուծել մեդիան,
- սովորեցնել որտեղ փնտրել և գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը,
- համեմատել տարբեր մեդիա ռեսուրսներ,
- քննարկել, թե ինչպես է մեդիան խմբագրվում, ինչ միջոցներ, հնարքներ են կիրառվում մեդիա ռեսուրսները ավելի գրավիչ դարձնելու համար,
- վերլուծել և գտնել թաքնվածը գովազդում,
- ինչպես ստեղծել մեդիա:

Այս տեսանկյունից քանի որ մեդիագրագիտությունը՝ որպես ինքնուրույն առարկա չի ուսուցանվում և նաև նրա ինքնուրույն դասավանդումը կարող է պահանջել որոշակի հմտություններ, որոնց սովորողները չեն տիրապետում, ուստի վերոնշյալ կարողունակությունների ձևավորմանը կարելի է հասնել ինտեգրված ուսուցման միջոցով: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա:

Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն:

Դասի ընթացքում կարելի է ինտեգրել ուսուցման նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց:

Կարելի է ինտեգրել նաև մտավոր և գործնական կարողություններ ու հմտություններ:

Ինտեգրված դասը պահանջում է նախապատրաստական աշխատանք, որի ընթացքում անհրաժեշտ է սահմանել.

- ինտեգրված դասի անցկացման դրդապատճառներն ու նպատակը,
- ինտեգրվող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը,
- ինտեգրման ձևը,
- ինտեգրվող նյութերի միջև կապերի բնույթը,

- նյութի ներկայացման միջոցները,
- նյութի հաջորդականության կառուցվածքը,
- դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև,
- տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները:

Անգլերենի ուսուցման մեջ մեդիագրագիտության ինտեգրումը կարող է ներառել ինչպես մեդիա ռեսուրսների կիրառում տարբեր կրթական նպատակների՝ օրինակ՝

- քերականության,
- ոճաբանության,
- բառապաշարի ուսուցման նպատակով, այլ նաև կարող է կիրառվել մեդիան ճիշտ վերլուծելու հմտությունների ինտեգրմամբ:

Օրինակ՝ կարելի է՝

- տարբեր ամսագրերի,
- թերթերի և լրատվական կայքերիլուրերի տեքստերը,
- հարցազրույցների տեսագրությունները,
- գովազդային հոլովակները կիրառել բայի ժամանակաձևերի, տարբեր լեզվառճական առանձնահատկությունների, խոսքային նմուշների, բառապաշարի հարստացման, կամ
- քերականական զանազան հմտությունների ուսուցման ժամանակ՝ զուգահեռ վերլուծելով վերնագրերի, ընտրված բառապաշարի ազդեցությունը լսարան գրավելու համար, ծանոթացնելով կեղծ և իրական տեղեկատվության ստուգման եղանակների հետ, սովորեցնելով տարբերակել լուրը լրագրողի սեփական կարծիքից, գտնելով թաքնվածը գովազդում կամ տեղեկատվության ենթատեսքտում:

Այդպիսի կիրառման օրինակ է Անգլերենի 10-րդ դասարանի դասագրքում[6] ընդգրկված արվեստի, հատկապես նկարչական տարբեր ուղղություններին նվիրված թեմա 5-ի (Unit 5. Are you fond of art?)ուսումնասիրման ժամանակ կիրառված մեր փորձը: Այդ թեմայի ուսումնասիրման ժամանակ ինտեգրելով մեդիագրագիտություն՝ աշակերտների հետ ուսումնասիրել ենք գույնի և երկրաչափական պատկերների կիրառությունը գովազդում, իսկ թեմայի ավարտին աշակերտներն իրենք են պատրաստել գովազդ՝ կիրառելով գույնի և պատկերի ազդեցությունը:

[6]Տե՛ս, Բաղդասարյան Ս., Գյուրջայանց Ս., <<Անգլերեն 10>>, հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք, Երևան 2010, էջ 19-21:

Կամ դեռահասների խնդիրներին նվիրված թեմա 8-ի և 9-ի (Unit 8. Who are you?, Unit 9. Love is what you need) ուսումնասիրման ժամանակ ինտեգրելով մեդիագրագիտություն՝ ուսումնասիրել ենք վիրտուալ և իրական ինքնությունների տարբերությունները, կիբերբուլինգի ազդեցությունը դեռահասների վրա և դրանից պաշտպանվելու եղանակները:

## Եզրակացություն

Այսպիսով, այսօրվա դպրոցում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում:

Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրե խնդրի լուծման ելք առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը:

Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն:

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը:

Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ:

Եվ այսպիսով, որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ:

Այս նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է.

- ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը,
- համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը,

- ինտեգրման ձևը,
- միավորվող նյութերի միջև կապերի բնույթը,
- նյութի հաջորդականության կառուցվածքը,
- նյութի ներկայացման միջոցները,
- դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև,
- տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները:

Ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից: Կախված նրանից, թե ինչ ձևով է տեղի ունենում ինտեգրումը (հավասարապես ինտեգրվում են երկու կամ ավելի առարկաներ, ինտեգրման ժամանակ գերակայությունը տրվում է մեկ առարկայի, իսկ մյուսը դառնում է օժանդակ, օգնող առարկա և այլն), կազմվում է դասի պլանը, որոշվում է դասի տևողությունը: Պլանի մեջ հստակորեն ներկայացվում է քայլերի հաջորդականությունը, պարզ որոշ ընդգծվում են առաջատար և օժանդակ առարկաները: Ինտեգրված դասն արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը դասի ճիշտ պլանավորումն է, որի մեջ, ըստ չափորոշչի եռամակարդակ պահանջների, պետք է ներառվի նաև գնահատման համակարգը:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Բաղդասարյան Ս., Գյուրջայանց Ս., <<Անգլերեն 10>>, հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք, Երևան 2010
2. Մեդիագրագիտություն, ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, Ինտերնյուս 2013
3. Екжанова Е.А., Резникова Е.В., Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов. Москва 2008
4. Краевский В.В., Основы педагогики, Учеб. Пособие для студ. Высш. Пед. Учб. Заведений. 2-е изд., испр. М.: Изд. «Академия» 2005
5. Марфенин Н.Н., Чему и как учить для устойчивого развития? // Экология и жизнь 2011. № 8(117)
6. Степанова М.В., Организация учебно-исследовательской деятельности старшеклассников в профильной школе. СПб.: 2005